ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՏԶՀ-ՏՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/1

ք. Երևան «23» օգոստոսի 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն **Արթուր Սողոմոնյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, և Տրանսնախագիծ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Մարտիրոսյանի, և ԷՅՋԻԹԻ Փրոջեքթ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որոնք գործում են կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Կատարող**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետը կազմում է 730 օրացուցային օր:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:[17]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **60,000,000 (վաթսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

---

[17] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի երաշխիքային տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրահանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը նեղառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018007725
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Տրանսնախագիծ ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0014,
Դավիթ Անհաղթ 23
ՀՎՀՀ՝ 00802905
Հ/Հ՝ 1150000461811810
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Մարտիրոսյան

/ստորագրություն/

Էյջիթի Փրոջեքթ ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան,
Շինարարների փողոց, 70 տուն
ՀՎՀՀ՝ 03024399
Հ/Հ՝ 11815011091400
Բանկ՝ Այ Դի Բանկ ՓԲԸ
Տնօրեն
Գ. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«23» օգոստոսի 2020թ. կնքված
ՀՏՀՀ-ՏՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիր	չափման միավորը	ընհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
1	71351540	ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ	դրամ	60,000,000	1	ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր	Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ավարտ (Նախատեսվում է 570 օր)
Ֆինանսավորման աղբյուր		2020թ. ՀՀ պետական բյուջե					
Պատվիրատու		Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ					
Աշխատանքի տեսակը		Ըստ ծավալաթերթի, որը կցվում է					

Տեխնիկական առաջադրանք
Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր
Շինարարության տեխնիկական հսկողություն

1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը վարկավորում է ստացել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի («Բանկ» կամ «ՎԶԵԲ») և դրամաշնորհ ԵՄ հարևանության ներդրումային գործիքի (EU NIF) ու Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանության համագործակցության ծրագրի (E5P) կողմից, ինչպես նաև տեխնիկական համագործակցության դրամաշնորհներ ՎԶԵԲ-ից և այլ դոնորներից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների հավաքման և կառավարման ծառայությունների բարելավմանն ուղղված ծրագրի իրագործման համար («Ծրագիր»): Որպես ծրագրի իրականացման գրասենյակ («ԾԻԳ») առաջարկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը («ՀՏԶՀ» կամ «Պատվիրատու»), որը հանդես է գալիս «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի անունից («Հաճախորդ» կամ «Ընկերություն»):

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 11 միլիոն եվրո:

Ծրագիրը ֆինանսավորելու է հետևյալ ներդրումները.

- Հրազդանում նոր սանիտարական աղբավայրի և Ակունքում ու Մարտունիում երկու փոխաբեռնման կայանների շինարարություն (այդ թվում՝ շինությունները և կառույցները),
- Աղբավայրի և փոխաբեռնման կայանների հատուկ սարքավորանք և մեքենայական

սարքավորումներ,
- աղբատար մեքենաներ,
- աղբամաններ,
- աղբահանության նոր կետեր (աղբամանների հարթակներ):

Հայտարարվել է սանիտարական աղբավայրի և երկու փոխաբեռնման կայանների շինարարության մրցույթը, և ներկայումս ընթանում է գնահատման գործընթացը:
Շինարարության համար տեխնիկական հսկողության իրականացումն ապահովելու համար նախատեսվում է ընտրել տեխնիկական հսկողության ընկերություն (Խորհրդատու):
Խորհրդատվական կազմակերպության ընտրությունն իրականացվելու է ՎՀԵԲ ուղեցույցների և ՀՀ օրենսդրության հիման վրա: Ժամանակի վրա հիմնված պայմանագիր (time-based contract) կստորագրվի ընտրված Խորհրդատուի հետ:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Տեխնիկական հսկողությունն իրականացվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. N44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի» հիման վրա: Տեխնիկական հսկողության հիմնական խնդիրներն են՝ ապահովել շինվերանորոգման աշխատանքների պահանջվող որակը, նրանց համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին, գործող նորմերին, ստանդարտներին և շինարարության մասին օրենքներին, ինչպես նաև երաշխավորել բնապահպանական կառավարման պլաններում (ԲԿՊ) ներկայացվող պահանջների ապահովումը:

1. Շինարարության տեխնիկական հսկողությունը իրականացվում է սանիտարական աղբավայրի և երկու փոխաբեռնման կայանների (այդ թվում՝ շինություններ և կառույցներ) շինարարական աշխատանքների մեկնարկի օրից մինչև ավարտված ծրագրի ընդունման ակտի վավերացումը:
2. Շինարարության տեխնիկական հսկողությունն իրականացվում է շինհրապարակի ամենօրյա այցելությունների միջոցով, որոնք հաստատվում են տեխնիկական հսկողության մատյանում գրառումների կատարմամբ:
3. Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական ստուգումներով, բացումներով, չափագրումներով, որոնց ընթացքում պարզվում է կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, շինարարական նորմերին և կանոններին:
4. Տեխնիկական հսկողությունն ապահովում է կատարված աշխատանքների, օգտագործվող նյութերի, կոնստրուկցիաների, իրերի որակը, ինչպես նաև աշխատանքների կատարման տեխնոլոգիական պահանջները, ներառյալ բնապահպանական և սոցիալական պահանջները ըստ գործող նորմերի և պետական ստանդարտների, ինչպես նաև ՀՏՀՀ-ի ցուցասրահում տեղադրված շինանյութերի նմուշների:
5. Խորհրդատուն պետք է իրականացնի շինարարության տեխնիկական հսկողություն ծրագրի հետևյալ բաղադրիչների համար.
   - Հրազդանում սանիտարական աղբավայրի (այդ թվում՝ շինություններ և կառույցներ) շինարարություն,
   - Ակունք համայնքում փոխաբեռնման կայանի (այդ թվում՝ շինություններ և կառույցներ) շինարարություն,
   - Մարտունի համայնքում փոխաբեռնման կայանի (այդ թվում՝ շինություններ և կառույցներ) շինարարություն:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Մասնակցել շենքերի և շինությունների առանցքների նշահարմանը, շինարարության ընթացքում ստուգել և չափագրել գեոդեզիական նիշերը:
2. Խորհրդատվություն տրամադրել Հաճախորդին՝ Fédération Internationale des Ingénieurs-Conseils-ի կողմից (FIDIC Red Book 1999 Edition) Կապալառուների կողմից 1999 թվականին մշակված «Շինարարության պայմանագրի պայմանների» 1-ին հրատարակությամբ նախատեսված

պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

3. Պարբերաբար ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին:
4. Ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և վերլուծությունների արդյունքների գոյությունը և նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում արգելել դրանց օգտագործումը՝ այն ձևակերպելով համապատասխան ակտերով:
5. Կապալառուի կողմից վարվող շինարարության ընդհանուր մատյանում նշել հայտնաբերված թերություններին և դրանց վերացմանն առնչվող նկատառումներին և դիտողություններին համապատասխան գրառումները:
6. Մասնակցել հեղինակային հսկողության, պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը:
7. Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմել դրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:
8. Ստորագրել սառեցված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարական օբյեկտների ընդունումը, ինչպես նաև ակտով նրանց հանձնմանը Պատվիրատուին՝ նշելով օբյեկտների տեխնիկական վիճակը:
9. Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր:
10. Վարել շինարարության ընդհանուր մատյան, կանոնավոր կերպով գրանցել օրական կատարված աշխատանքների ընթացքը, շինհրապարակ ներմուծվող կոնստրուկցիաների, իրերի, նյութերի քանակը և որակը:
11. Պատվիրատուի և կապալառուի հետ համատեղ կազմել և վավերացնել ծածկվող աշխատանքների ընդունման ակտերը:
12. Վավերացնել կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների իսկության և որակի համար:
13. Ստորագրել շինարարության ավարտական ակտերը:
14. Նշված ակտերը չվավերացնելու դեպքում գրավոր ներկայացնել պատճառները:
15. Կատարել շրջակա միջավայրի Ա կատեգորիային պատկանող գործունեության ամենամսյա մոնիտորինգ՝ ուղղված գործունեության՝ ԲԿՊ-ներին համապատասխանության ապահովմանը:
16. Շենքերի և կառույցների ու ծրագրի բնապահպանական և սոցիալական երաշխիքների պահանջների անհամապատասխանությանը, կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների հայտնաբերման դեպքում անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին:
17. Խորհրդատուն պետք է ապահովի, որպեսզի ՀՏՀՀ-ն իրազեկված լինի շինարարության ընթացքում ցանկացած չնախատեսված հողօգտագործման մասին, և կառավարվի՝ համաձայն Ծրագրի հայտերի ներկայացման հրավերի (request for proposals, RFP), որը հասանելի կդառնա Խորհրդատուին:

Առաջադրանքների մանրամասն նկարագրությունը ներկայացված է Հավելված 1-ում:

4. ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շինարարության վարման մատյանը՝ համապատասխան գրառումներով, հանդիսանում է Խորհրդատուի ընթացիկ հաշվետվություն: Բացի սրանից, Խորհրդատուն Պատվիրատուին ներկայացնում է ամսական հաշվետվություն: Ամսական հաշվետվությունում տրվում են պայմանագրի

հղումը, ընդհանուր տեղեկություններ շինարարական աշխատանքների ընթացքի, իրացված գումարների վերաբերյալ, ինչպես նաև գնահատվում է կապալառու կազմակերպության աշխատանքը, բացահայտվում են առկա խնդիրները և ներկայացվում են առաջարկներ նրանց վերացման համար: Աշխատանքների բնապահպանական և սոցիալական համապատասխանությունը կազմում է յուրաքանչյուր ամսական հաշվետվության մաս: Լրացված ամսական բնապահպանական վերահսկման ցուցակները և ուղեկցող լուսանկարները կցվում են B կատեգորիայի աշխատանքների համար: Հաշվետվության մեջ ներառված իրական տվյալները ենթակա են վավերացման Պատվիրատուի վերահսկող ճարտարագետների կողմից (համաձայն տեխնիկական վերահսկողության մատյանի): Հաշվետվողական մյուս պարտավորությունները թվարկված են Հավելված 1-ում:

Հավելված 1. Աշխատանքների պայմանագրերի հսկողություն. առաջադրանքների մանրամասն նկարագրություն

a) Պայմանագրերի հսկողություն

Պատվիրատուն Խորհրդատուից պետք է պահանջի կատարել Ինժեների պարտականությունները և իրավասությունները, ինչպես նշված է կամ պարտադիր կերպով նախատեսված է Պայմանագրում: Պայմանագրի կիրառելի պայմաններն են շինարարական և ինժեներական աշխատանքների շինարարության պայմանագրի պայմանները, որոնք նախատեսված են Պատվիրատուի կողմից:

Ինժեները պետք է կատարի իր պարտականությունները կամ գործի.

- կանխազդիչ կերպով, երբ պայմանագրի իրականացման նախաձեռնությունը Ինժեներինն է.
- արձագանքող կերպով՝ ի պատասխան Կապալառուի կամ Պատվիրատուի պահանջներին, և,
- պասիվորեն՝ Պայմանագրի պահանջները պահպանելիս:

Երբ դա տեղին է և չի հակասում Պայմանագրին, Ինժեները պետք է ցանկացած ողջամիտ քայլ ձեռնարկի՝ Պատվիրատուի շահերը պաշտպանելու համար:

b) Աշխատանքների մեկնարկը շինհրապարակում

Բոլոր պայմանագրերի համար Խորհրդատուն պարտավոր է.

- Աշխատանքների մեկնարկից հետո, պայմանագրերի պայմաններին համապատասխան, կազմել և հանձնել մեկնարկի վկայագրեր ու ձեռք բերել Կապալառուների վավերացնող ստորագրությունները:
- Եթե Կապալառուները ժամանակ առ ժամանակ չեն ստանում շինհրապարակի տիրապետում՝ համաձայն պայմանագրերի, կամ եթե Կապալառուն Պայմանագրով նախատեսված ժամկետներում չի ստանում մեկնարկի վկայագիր, գնահատել՝ արդյոք Կապալառուն հավանական է, որ ուշացումներ և (կամ) լրացուցիչ ծախսեր ունենա, ու համապատասխանաբար տեղեկացնել Հաճախորդին:

c) Նորմատիվային պահանջներ

Խորհրդատուն պարտավոր է.

- ձեռք բերել և պահել բոլոր համապատասխան մարմինների, պետական մարմինների և ընկերությունների ցանկացած կիրառելի ստանդարտների, կանոնների կամ կանոնակարգերի պատճենները և պահել ֆայլերը, որոնց գույքի կամ իրավունքների վրա Ծրագիրն ազդում կամ կարող է որևէ կերպ ազդել: Մշտադիտարկել և զեկուցել Հաճախորդին՝ նշված համաձայնություններին Կապալառուների կողմից համապատասխանության ձեռքբերման մասին:
- Կապալառուների կողմից պահանջվելու և Պատվիրատուի թույլտվության դեպքում Կապալառուներին աջակցել քաղաքաշինական նախագծերի համաձայնության, շինարարության

ենթաօրենսդրության դիմումների, շինարարության ակտերի, շենքերի և հակահրդեհային կարգավորման հաստատումների, ՇՄԱԳ-ի հաստատումների և բնապահպանական առնչվող թույլտվությունների, ինչպես նաև բոլոր այլ կանոնադրական հաստատումների և պահանջների համար:

- աջակցել ցանկացած սեփականատիրոջ, վարձատուի, հարակից տարածքների տերերի, պետական մարմինների, լիցենզավորող մարմինների և այլ անձանց հետ ցանկացած բանակցության ընթացքում՝ Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված լրացուցիչ հող ձեռք բերելու համար:
- անհրաժեշտության դեպքում կապ հաստատել կոմունալ սպասարկման կազմակերպությունների և այլ մարմինների հետ ու անհրաժեշտության դեպքում աջակցել և համակարգել այդ կապը:
- Կազմել և վարել Ծրագրի նախագծման, իրականացման և շահագործման համար բոլոր անհրաժեշտ լիցենզիաների, թույլտվությունների և հաստատումների ժամանակացույցը (ժամանակացույցում պետք է նշվեն ներկայացման և հաստատումների ժամկետները, անձը կամ անձինք, ովքեր իրենց, Պատվիրատուի կամ Կապալառուների անունից պատասխանատու են նման լիցենզիաների համար դիմում ներկայացնելու համար): Ստուգել, որ այդ դիմումները ժամանակին ներկայացվեն և անհրաժեշտության դեպքում ժամանակ առ ժամանակ աջակցել այլ կողմերի հետ բանակցություններին:
- համակարգել և աջակցել Հաճախորդին՝ ապահովելու համար, որ պահանջվող բոլոր թույլտվությունները ժամանակին ձեռք բերվեն:

d) <u>Շինարարության ռիսկերի գնահատում</u>

Խորհրդատուն պարտավոր է.

- բացահայտել նախագծման և շինարարության փուլերին բնորոշ վտանգները: Դրանք պետք է ներառեն ընթացակարգային ռիսկեր, բնապահպանական և սոցիալական ռիսկեր, տեխնիկական և որակի ռիսկեր, գերածախսերի ռիսկ, հետաձգումների ռիսկ, երրորդ անձանց համար ռիսկեր և այլն:
- գնահատել այդ ռիսկերի հավանականությունը և հնարավոր հետևանքները.
- սահմանել մեղմացման հնարավոր միջոցառումները, և
- կանխազդիչ կերպով և շարունակաբար ձգտել կառավարել և նվազեցնել (վերացնել) վտանգները (ռիսկերը):

e) <u>Կատարողական գծագրեր (As-Built Drawings) և փաստաթղթեր</u>

Բոլոր պայմանագրերի համար Խորհրդատուն պարտավոր է.

- Ավարտելուց հետո Կապալառուներից հաստատման նպատակով ստանալ կատարողական գծագրերի անգլերեն և հայերեն լեզուներով պատճենները, ինչպես նաև նշված մյուս մշտական աշխատանքներին վերաբերող տեխնիկական և նախագծային այլ տեղեկություններ ու ավարտական գրառումներ, ինչպես նշված է Պայմանագրում և ինչպես Ինժեները կամ Հաճախորդը կարող են ողջամտորեն պահանջել:

f) <u>Բնապահպանական և սոցիալական հարցեր</u>

Խորհրդատուն պետք է ապահովի Բանկի բոլոր կիրառելի բնապահպանական և սոցիալական պահանջների կատարումը, և Պատվիրատուն պատշաճ կերպով տեղեկացված լինելը պահանջների մասին: Սա ներառում է Պատվիրատուին աջակցություն ցուցաբերելը՝ Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանի (ԲՍԳՊ), բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի պլանի, Շահառուների ներգրավման պլանի (ՇՆՊ) իրականացման գործում և Բանկին ամենամյա բնապահպանական ու սոցիալական հաշվետվությունների պատրաստումը՝ օգտագործելով

հաստատված ՎՋԵԲ հաշվետվական ձևաչափը: Խորհրդատուին անհրաժեշտ կլինի նաև վերահսկել և մշտադիտարկել Փոխառուի կողմից ԲՍԳՊ-ի իրականացումը և կապալառուների կողմից պայմանագրի պայմանները: Բացի այդ, Խորհրդատուն պետք է վերահսկի ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ՇՄԱԳ հաշվետվության և եզրակացության մեջ նշված պահանջների կատարումը:

g) <u>Հնագիտական գտածոներ</u>

Բոլոր պայմանագրերի համար Խորհրդատուն պարտավոր է.

- շինհրապարակում ցանկացած բրածոյի, մետաղադրամի, արժեքավոր կամ հնության առարկաների կամ նման այլ մնացորդների, վտանգավոր աղբանոցների, վտանգավոր աղտոտվածության կամ զինամթերքի հայտնաբերման դեպքում Կապալառուներից տեղեկություն ստանալ և առաջարկություններ ներկայացնել Հաճախորդին՝ ձեռնարկվելիք քայլերի ու նման քայլերի համար անհրաժեշտ ժամկետների և ծախսերի վերաբերյալ:
- սահմանել ժամկետների երկարաձգման անհրաժեշտությունը և ցանկացած լրացուցիչ վճար, որին Կապալառուն իրավունք ունի՝ համաձայն Պայմանագրի պայմաններին՝ հնագիտական գտածոներ կամ վտանգավոր աղբանոցներ հայտնաբերելու արդյունքում:

h) <u>Առողջություն և աշխատանքի անվտանգություն</u>

Խորհրդատուն պետք է ապահովի, որ Կապալառուն մշակի և իրականացնի Շինարարության առողջության և աշխատանքի անվտանգության պլանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Կապալառուներից պահանջի, որ իրենց ծախսերով ապահովեն և պահպանեն լուսավորությունը, անվտանգությունը, ցանկապատումը, նախազգուշական նշանները՝ աշխատանքի անվտանգության պահանջների պահպանման և հասարակության կամ այլոց անվտանգության ու հարմարավետության ապահովման համար:

i) <u>Ծրագրում և առաջընթացի մշտադիտարկում</u>

Բոլոր պայմանագրերի համար Խորհրդատուն պարտավոր է.

- Խորհրդատվություն տրամադրել Հաճախորդին՝ Կապալառուների կողմից ենթապայմանագրային պարտավորությունների կատարման վերաբերյալ, ինչպես նշված է Պայմանագրերում.
- Կապալառուների Ծրագիրն ստանալուց հետո և FIDIC պայմանագրի պայմաններով նախատեսված ժամկետում ծանուցել կապալառուներին՝ տրամադրելով պատճենը Հաճախորդին, արդյոք Ծրագիրը համապատասխանում է Պայմանագրին, և եթե ոչ, ապա որ առումով չի համապատասխանում.
- Կապալառուներից պահանջել տրամադրել դրամական միջոցների ակնկալվող ամսական շարժի վերաբերյալ տեղեկատվություն.
- Հաճախորդի անունից ստուգել, որ Աշխատանքների կատարման ընթացքը համապատասխանի Պայմանագրերով հաստատված Ծրագրին և իրագործման ժամանակացույցին: Հնարավորինս նախապես ծանուցել Հաճախորդին ցանկացած կարևոր փուլի սահմանված վերջնաժամկետի ձախողման կամ Ծրագրին չհամապատասխանելու մասին:
- զեկուցել Կապալառուների կողմից Աշխատանքների կատարման ընթացքի վերահսկման մասին՝ Պայմանագրերի համաձայն սահմանված ժամկետում աշխատանքների ավարտն ապահովելու համար.
- Եթե Պայմանագրերում թվարկված պատճառներից դուրս, Աշխատանքների կամ որևէ Բաժնի առաջընթացի արագությունը որևէ պահի, Խորհրդատուի կարծիքով, չափազանց դանդաղ է՝ Ավարտի ամսաթվով Աշխատանքների կամ որևէ Բաժնի ավարտն ապահովելու համար, FIDIC պայմանագրի պայմաններին համապատասխան՝ գրավոր հրահանգավորել Կապալառուներին՝ տրամադրելով պատճենը Հաճախորդին.

- լիազորել Կապալառուների ցանկացած ողջամիտ պահանջ՝ աշխատել համաձայնեցված ժամանակային շրջանակներից դուրս (օրինակ՝ գիշերային ժամերին կամ տեղական տոների ժամանակ)՝ արագացնելու ընթացքը՝ Աշխատանքների կամ որևէ Բաժնի Ավարտի ամսաթվին համապատասխանությունն ապահովելու համար.
- Կապալառուներից պաշտոնական կերպով ստանալ եռամսյակային և ամսական Առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունների պատճենները՝ համաձայն FIDIC պայմանագրի պայմանների՝ ստուգելով դրանք՝ ապահովելու համար, որ դրանք ընդգրկում են Աշխատանքների բոլոր համապատասխան ասպեկտները և կարևորում են Ծրագրից կամ հենանիշերից իրական կամ հավանական շեղումները, Վճարման կամ Նախագծման ներկայացման ժամանակացույցերը և նշում են առաջարկվող կամ անհրաժեշտ միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն Կապալառուների կողմից՝ այդպիսի շեղումները շտկելու համար: Առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունները մեկնաբանել և անհրաժեշտության դեպքում լրացնել դրանք՝ նախքան Հաճախորդին փոխանցելը, և խորհուրդ տալ անհրաժեշտ միջոցների մասին, որ պետք է ձեռնարկվեն յուրաքանչյուր Բաժնի ավարտի համար՝ Ավարտի ամսաթվին հասնելու համար:
- անցկացնել ֆորմալ ամսական հանդիպումներ («Ծրագրի թիմի հանդիպումներ») Ծրագրի մասնակիցների և այլ համապատասխան կողմերի հետ: Այս հանդիպումները պետք է ունենան ֆորմալ օրակարգ և արձանագրություններ:
- ստուգել ապահովագրության, իրագործման երաշխիքների և այլ անհրաժեշտ պայմանագրային փաստաթղթերի տրամադրումը:

j) <u>Ինժեների աշխատանքային ծրագրի հաշվետվություն</u>

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Ինժեների կողմից Կապալառուների Աշխատանքային ծրագրին համաձայնություն տալուց հետո 28 օրվա ընթացքում Ինժեները հաշվետվություն կներկայացնի Հաճախորդին և Պատվիրատուին (Ինժեների աշխատանքային ծրագրի հաշվետվություն), որը կներառի.

a) ամսական կտրվածքով կամ հենանիշերի վրա հիմնված վճարումների ժամանակացույցին համապատասխան՝ Կապալառուների բոլոր այն դրամական միջոցների մանրակրկիտ գնահատումների պատճենները, որոնց համար, համաձայն Պայմանագրի, Կապալառուներն իրավունք ունեն վճարվել.

b) Կապալառուների մանրամասն Ժամանակային ծրագրի պատճենը, որը ցույց է տալիս այն կարգը, որով Կապալառուները մտադիր են իրականացնել Աշխատանքները, այդ թվում՝ այն մեթոդների ընդհանուր նկարագրությունը, որոնցով Կապալառուները մտադիր են առաջնորդվել, Աշխատանքների կատարման հիմնական փուլերը և այլ տեղեկատվություն, որը կարող է Ինժեների կողմից համարվել անհրաժեշտ և տեղին.

c) Օժանդակ հաշվետվությունը, որը պետք է ներառի.
   - կարևորագույն միավորների ցանկը և Կապալառուների կողմից առաքման ժամկետների վերաբերյալ գնահատումները, որոնք ուղեկցվում են Ինժեների կողմից յուրաքանչյուր կարևորագույն միավորի համար առաքման ամենաուշ ժամանակահատվածների գնահատմամբ՝ Պայմանագրի համաձայն ավարտը երաշխավորելու համար.
   - Սարքավորանքի և նյութերի յուրաքանչյուր հիմնական միավորի արտադրության համար արտադրողի անվանումը, արտադրության վայրը և հետևյալի սպասվող ամսաթվերը.
     - արտադրության մեկնարկ,
     - Կապալառուների և (կամ) Ինժեների ստուգումներ ու փորձարկումներ, և
     - առաքում և ժամանում շինհրապարակ;
   - Ինժեների կողմից ստուգումների և փորձարկումների համար ընտրված նյութեր և սարքավորանք, այդ թվում՝ իրականացվելիք փորձարկումների մասնագրեր և համապատասխան պայմանավորվածություններ.
   - Պայմանագրին համաձայն՝ Ինժեների կողմից հաստատված՝ Կապալառուների ներկայացուցչի և այլ վերահսկող անձնակազմի անուններն ու մանրամասները, այդ թվում՝

սեռը.

- Ենթակապալառուների անվանումները, որոնք Պայմանագրին համապատասխան՝ համաձայնեցված են Ինժեների կողմից, և յուրաքանչյուր ենթակապալառուի համար՝ ենթակապալային Աշխատանքների արժեքը և քանակը. այս բաժինը պետք է ներառի Ինժեների համաձայնության համառոտ հիմնավորում.
- Հաշվետու ժամանակահատվածում Ինժեների կողմից տրված կամ թողարկված բոլոր ծանուցումների, համաձայնությունների, հաստատումների, վկայագրերի և որոշումների պատճենները, և
- Հաճախորդի կողմից պահանջվող այլ տեղեկություններ:

k) <u>Պայմանագրերի ամսական առաջընթացի հաշվետվություններ</u>

Ինժեները պետք է պատրաստի և Պատվիրատուին ներկայացնի «Ամսական առաջընթացի հաշվետվություններ»: Առաջին հաշվետվությունը կներառի Ինժեների՝ «Աշխատանքային ծրագրի հաշվետվությունից» հետո մինչև առաջին օրացուցային ամսվա ավարտն ընկած ժամանակահատվածը: Յուրաքանչյուր ամսական հաշվետվություն կներառի հետևյալը.

a) հակիրճ ամփոփ տեղեկատվություն այն իրադարձությունների կամ հանգամանքների մասին, որոնք՝ Ինժեների կարծիքով, կարող են բավարար պատճառ հանդիսանալ Պայմանագրի շրջանակներում որևէ ժամկետի ուշացման, պահանջի և/կամ գերածախսի համար, ինչպես նաև այդ իրադարձությունները կամ հանգամանքները հաղթահարելու համար Ինժեների կողմից առաջարկված և արդեն ձեռնարկված (կամ ձեռնարկվելիք) միջոցառումները և դրանց պայմանագրային հիմքերը.

b) համեմատական աղյուսակ, որը ցույց կտա կապալառուների դրամական հոսքերի սկզբնական գնահատված գումարն ամսական կտրվածքով բոլոր այն վճարումների մասով, որոնք կապալառուներն իրավասու են ստանալ պայմանագրերի շրջանակներում, ինչպես նաև Ինժեների կողմից վավերացված փաստացի վճարման գումարները մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը: Եթե ամսական փաստացի վճարման վկայագրերի կուտակային գումարն ավելի փոքր է կապալառուների կողմից գնահատված գումարից, Ինժեները աղյուսակին կկցի հիմնավորող հաշվետվություն և կտրամադրի հետևյալը՝
   - տարբերության պատճառ հանդիսացող բոլոր դեպքերը կամ հանգամանքները.
   - յուրաքանչյուր նման դեպքի կամ հանգամանքի նշանակալիության գնահատականը, այդ թվում՝ Ինժեների կարծիքը, թե արդյոք դրանք կարող են վտանգել ավարտը պայմանագրերի համաձայն.
   - զեկույց՝ յուրաքանչյուր նման դեպքի կամ հանգամանքի հաղթահարման համար իրականացվող (կամ իրականացվելիք) միջոցառումների մասին և դրանց պայմանագրային հիմքերը:

c) մատակարարման փաստացի ավարտման տոկոսի համեմատությունը պլանայինի հետ Ինժեների «Աշխատանքային պլանի հաշվետվությունում» նույնականացված՝ ծրագրի սահմանված կարգի և իրականացման ժամկետների յուրաքանչյուր կետի մասով: Եթե որևէ մատակարարում հետ է ընկնում ծրագրից, Ինժեները պետք է մեկնաբանի հնարավոր հետևանքների մասին և նշի իրականացվող (կամ իրականացվելիք) ուղղիչ միջոցառումները:

d) մատակարարման փաստացի ավարտման տոկոսի համեմատությունը պլանայինի հետ՝ սարքավորանքի և նյութերի մասով, եթե դրանք ներառված չեն ծրագրի սահմանված կարգի և իրականացման ժամկետների կետերում.

e) տեղեկատվություն կանխավճարային գումարների օգտագործման մասին՝ դրանց համապատասխան հիմնավորմամբ.

f) արտադրության և շինհրապարակում առաջընթացը ցույց տվող լուսանկարներ.

g) որակի նոր երաշխիքների ցանկ, հաշվետվություններ փորձարկումների արդյունքների և նյութերի վկայագրերի մասին.

h) կապալառուների կողմից ներկայացված անվտանգության վիճակագրություն, այդ թվում՝ մանրամասներ աշխատողների, հանրության և շրջակա միջավայրի հետ առնչվող յուրաքանչյուր

խոշոր պատահարի և գործողության մասին (օրինակ, գործադուլներ, ապստամբություններ, ցույցեր, ուշադրություն լրատվամիջոցների կողմից և այլն).

i) Ինժեների կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկած բոլոր ծանուցումների, համաձայնությունների, հաստատումների, վկայագրերի և որոշումների ցանկը, և

j) այլ տեղեկատվություն՝ Պատվիրատուի պահանջով:

l) Որակի վերահսկողություն

Խորհրդատուն պարտավոր է.

- մշակել «Որակի կառավարման պլան» (ՈԿՊ) Ծրագրի բոլոր ասպեկտների համար.
- պահանջել կապալառուներից (և (կամ) նախագծման խորհրդատուներից) մշակել «Ծրագրին հատուկ որակի ապահովման ձեռնարկ» և հետևել այդ պլանին:
- կապալառուներից (և (կամ) նախագծման խորհրդատուներից) ստանալ «Որակի ապահովման ձեռնարկի»՝ ամբողջությամբ ըստ կետերի մանրամասնած տարբերակն անգլերեն և հայերեն լեզուներով, հնարավորինս արագ ստուգել ու մեկնաբանել այն և, անհրաժեշտության դեպքում, խնդրել կապալառուներից լրացումներ կատարել ձեռնարկում.
- ստուգել կապալառուների և ենթախորհրդատուների կողմից որակի ապահովման իրականացումը.
- Ինժեների կողմից պահանջվող ձևով տեղեկացնել Պատվիրատուին նման ամբողջական մանրամասնած «Որակի ապահովման ձեռնարկի» ստանալուն առնչվող դժվարությունների մասին: Իրականացնել պահանջվող ընդհանուր վերահսկում՝ ապահովելու կապալառուների կողմից Աշխատանքների որակի ապահովման արդյունավետ և բավարար ընթացակարգի պահպանումը ու դիտարկել ընթացակարգի կատարումը.
- ապահովել, որ կապալառուները պահեն Պատվիրատուի համար ընդունելի անկախ ստուգող ընկերություններ, որոնք կիրականացնեն իրենց սեփական որակի վերահսկումը (ՈՎ).
- ծանուցել Պատվիրատուին ցանկացած չանցած փորձի կամ զննման մասին, եթե դա կարող է բերել ավարտման ժամկետի ուշացման կամ այլ նյութական բացասական հետևանքների, խորհրդատվություն տալ հետագա փորձարկումների մասին և կազմակերպել կապալառուների կողմից անհրաժեշտ ուղղումները.
- իրագործել կապալառուների կողմից իրականացված աշխատանքների ընդհանուր զննողական ստուգում՝ ապահովելու նյութերի և աշխատանքների իրականացման հմտության որակն ու ստանդարտները, համապատասխանությունը պայմանագրերում ներառված մասնագրերին և գծագրերին, հաստատված նախագծին, մանրամասն գծագրերին, աշխատանքների կատարման մեթոդներին, որակի ապահովման ձեռնարկին՝ դրանցում արված համաձայնեցված փոփոխություններով հանդերձ:
- ցանկացած ողջամիտ ժամանակ ունենալ մուտք շինհրապարակ և արհեստանոցներ, ինչպես նաև Աշխատանքների համար նյութերի ու սարքավորանքի արտադրության, հավաքման կամ պատրաստման տեղերը.
- հավաստել, որ պայմանագրերի շրջանակներում պահանջվող մատակարարվելիք նյութերի կամ սարքավորանքի անկախ փորձարկումներն իրականացվել կամ իրականացվելու են պայմանագրերի պահանջների համաձայն՝ կապալառուների հաշվին.
- համաձայնեցնել կապալառուների հետ նյութերի կամ սարքավորանքի ցանկացած զննման, հաստատման կամ փորձարկման ընթացակարգերը և ժամկետները՝ «Որակի ապահովման ձեռնարկով» կամ պայմանագրերով նախատեսված ձևով: Եթե փորձի համար անհրաժեշտ է ծանուցում, ապա այն պետք է տրվի կապալառուներին նման զննմանը կամ փորձին մասնակցելու մտադրությունից առնվազն 72 ժամ առաջ:
- կապալառուների հետ համաձայնեցնել ցանկացած գործնական ընթացակարգ Ինժեների կողմից որևէ ուսումնասիրության իրականացնելու համար, որը կարող է պահանջվել մինչև կապալառուների կողմից Աշխատանքների որևէ մասի ծածկումը: Այդ ընթացակարգի և «Որակի ապահովման ձեռնարկի» համաձայն՝ ուսումնասիրել և ստուգել Աշխատանքների ցանկացած մաս, որը շուտով պետք է ծածկվի կամ կդառնա ոչ տեսանելի: Ծանուցել և խորհրդատվություն տալ

Պատվիրատուին ցանկացած հայտնաբերած նյութի թերության վերաբերյալ և հետևել դրա վերացմանը:

- կապալառուներից դիտարկման համար պահանջել տրամադրել բոլոր փորձերի արդյունքների պատճենները՝ փորձի իրականացումից հետո ողջամիտ ժամանակ անց.
- կապալառուների աշխատանքի ընդհանուր վերահսկողության, կամ տեղամասային զննումների միջոցով որոշել, թե արդյոք որևէ նյութ կամ սարքավորանք թերի է, կամ կարող է լինել թերի, կամ որևէ այլ կերպ չի համապատասխանում պայմանագրերին և մերժել այդ նյութերը կամ սարքավորանքը.
- նկատի առնել սարքավորանքի, ապրանքների կամ նյութերի զննման և փորձարկման ցանկացած ողջամիտ պահանջ Պատվիրատուի կողմից, եթե պարզվել է, որ դրանք թերի են և չեն համապատասխանում պայմանագրերին, կամ եթե Պատվիրատուն համարում է, որ կան ողջամիտ հիմքեր կասկածելու, որ կա թերություն կամ թերություններ:
- հնարավորություն ընձեռել Պատվիրատուին հայցել և ներկա գտնվել Աշխատանքների որևէ ծածկվելիք և ոչ տեսանելի դարձող մասի ուսումնասիրությանը և չափմանը, ինչպես նաև ուսումնասիրել հիմքերը՝ մինչև դրանց վրա տեղադրվի Աշխատանքների ցանկացած մաս: Ողջամտորեն նախապես ծանուցել Պատվիրատուին, երբ նման աշխատանք կամ հիմք պատրաստ լինի այդ ուսումնասիրության համար:
- տուի պահանջով իրականացնել տեղամասային ցանկացած այլ զննում կամ վերահսկում, կամ ապահովել կապալառուների կողմից իրականացվող նման փորձարկումները, վերահսկել դրանք և իրականացնել ցանկացած այլ ընթացակարգ կամ միջոցառումներ համապատասխան մարմինների հետ.
- վերահսկել գործարանային զննումները, տեղադրման աշխատանքները շինհրապարակում և անհրաժեշտության դեպքում Ծրագրի բաղադրիչների գործարկումը (փորձարկումը):

m) <u>Շինհրապարակի կառավարում</u>

Խորհրդատուն պարտավոր է.

- մասնակցել շինհրապարակի հանդիպումներին և ջանքեր գործադրել, որպեսզի չլուծված խնդիրները միշտ կարգավորվեն՝ ուշացումներից կամ լրացուցիչ ծախսերից խուսափելու համար (սակայն, հաշվի առնելով պայմանագրերի պայմանները և սույն տեխնիկական առաջադրանքով Ինժեների լիազորությունները).
- հետևել կողմերի միջև շփման բոլոր եզրերին [ինտերֆեյսներին], մասնակցել դրանց համակարգման հանդիպումներին և երաշխավորել, որ շփումները ճիշտ են կառավարվում, իսկ դրանց հետ առնչվող խնդիրները քննարկվում և լուծում են ստանում.
- վարել բոլոր մասնակցած կամ անցկացրած հանդիպումների և քննարկումների ամբողջական և ճիշտ գրանցումներն ու անմիջապես հասանելի դարձնել դրանք Պատվիրատուի զննման համար՝ վերջինիս խնդրանքով.
- Պատվիրատուի խնդրանքով մասնակցել ընդհանուր կամ տեխնիկական հարցերի շուրջ անցկացվող հանդիպումներին՝ տարբեր կարծիքները լուծելու համար.
- ապահովել, որ Պատվիրատուն ժամանակին ստանա ծանուցումներ և թույլտվություն կապալառուների հետ բոլոր տեղամասային և այլ հանդիպումներին մասնակցելու համար.
- ծանուցել կապալառուներին, եթե Ինժեները առարկի որևէ անձի նկատմամբ, ով դրսևորել է իրենոչ կոմպետենտ կամ ոչ պարտաճանաչ ձևով, ու խորհրդատվություն տրամադրի Պատվիրատուին նման դեպքերում և համաձայնվել ցանկացած գործողությունների, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել.
- Խորհրդատվություն տա Պատվիրատուին շինհրապարակում կապալառուների ռեսուրսների ընդհանուր կազմակերպման, այդ թվում՝ կառավարման և պլանավորման, աշխատուժի, արտադրամասերի և սարքավորումների հարցերի վերաբերյալ:

n) <u>Վճարումներ և հաշիվներ</u>

Խորհրդատուն պետք է իրականացնի Ինժեների բոլոր պարտականությունները՝ կապալառուների Աշխատանքների դիմաց պայմանագրերի համաձայն վճարումներ կատարելու մասով.

- յուրաքանչյուր ամիս ստանա հաշիվ-ապրանքագրեր կապալառուներից՝ պայմանագրերի համաձայն.
- կապալառուների հաշիվ-ապրանքագրերը ստանալուն պես յուրաքանչյուրի պատճենն ուղարկի Պատվիրատուին և պատշաճ կերպով հաշվի առնի Պատվիրատուի բոլոր նկատառումներն ու մեկնաբանությունները.
- պայմանագրերի համապատասխան դրույթների համաձայն ստուգի կապալառուների հաշիվ-ապրանքագրերը և, հնարավորության դեպքում, կապալառուների հետ կարգավորի ցանկացած սխալ կամ հարց, որը կարող է առաջանալ դրանց առնչությամբ, խորհրդատվություն տրամադրի Պատվիրատուին բոլոր ճշգրտումների մասով, որոնք կհամարվեն անհրաժեշտ.
- հաստատի կապալառուների հաշիվ-ապրանքագրերի դիմաց վկայագրվող գումարը՝ պայմանագրերի համաձայն: FIDIC-ի պայմանագրի պայմաններով սահմանված ժամկետներում Կապալառուի և Պատվիրատուի անունով թողարկի վկայագիր, որում նշված կլինի Պատվիրատուի կողմից Կապալառուին վճարվելիք կուտակային գումարը:
- վավերացնի Կապալառուին հասանելիք ցանկացած լրացուցիչ գումար վավեր պահանջների դիմաց, որոնք ծանուցվել են Պայմանագրով սահմանված ընթացակարգերի համաձայն.
- նկատի առնի պայմանագրերի համաձայն կապալառուների կողմից ներկայացված ցանկացած հաշիվ-ապրանքագիր և վավերացնի ցանկացած լրացուցիչ գումար, որը Ինժեներն իրավասու է վավերացնել որպես հասանելի գումար, պայմանով, որ կապալառուները միշտ տրամադրել են բավարար մանրամասներ, որոնք հնարավորություն են տվել Ինժեներին որոշել հասանելի գումարը.
- ի մի բերի և կազմի եռամսյակային բյուջեներ, որոնք ցույց կտան Պատվիրատուից (Պատվիրատուից) կապալառուներին հասանելիք գումարները, պայմանագրերի հաշիվ-ապրանքագրերի և վկայագրերի ամսաթվերն ու գումարները, ինչպես նաև այն հենանիշերը և ծավալները, որոնց ակնկալվում է հասնել եռամսյակում և անմիջապես ներկայացնի դրանք Պատվիրատուին.
- ամբողջությամբ հետևի վիճելի վկայագրերի մասով պայմանագրով սահմանված ընթացակարգին: Մասնավորապես, երկու շաբաթվա ընթացքում կայացնի պայմանագրերի շրջանակում ցանկացած վճիռ, որի անհրաժեշտությունը կարող է առաջանալ: Անմիջապես կատարի ցանկացած վկայագրի որևէ ուղղում կամ փոփոխություն, կամ որևէ այլ գործողություն, որը լիազորված է պայմանագրերով, եթե Ինժեները դա ճիշտ է համարում:
- ինչպես պահանջվում է FIDIC-ի պայմանագրի պայմաններով, վերջին կատարողական վկայագրի թողարկումից հիսունվեց օրից (56) ոչ ուշ, ստանա կապալառուներից վերջնական վճարման վկայագրի նախագիծը՝ պայմանագրերի համաձայն: Վերջնական վճարման վկայագրի նախագիծը ստանալուց հետո, FIDIC-ի պայմանագրի պայմաններով սահմանված ժամկետներում, աշխատի կապալառուների հետ վերջնական հաշվետվությունը համաձայնեցնելու համար:
- վարի ծրագրի հաշիվները և պատրաստի ծրագրի վերջնական հաշվետվությունները:

o) <u>Ուշացումներ և պահանջներ</u>

Խորհրդատուն պարտավոր է.

- ստուգել, որ Կապալառուները շարունակեն ներկայացնել ուշացումների վերաբերյալ Պայմանագրերով պահանջվող մանրամասները և ծանուցումները և փոխանցել այդ մանրամասներն ու ծանուցումները Պատվիրատուին.
- անմիջապես ծանուցել Պատվիրատուին, եթե Կապալառուն չի ավարտում, կամ, ըստ ամենայնի, չի ավարտի որևէ հատված՝ համապատասխան ավարտման ամսաթվին.
- խորհրդատվություն տրամադրել Պատվիրատուին ցանկացած դժվարության առնչությամբ, որն ընդհանրապես կարող է առաջանալ Աշխատանքների կատարման ընթացքում.
- FIDIC-ի պայմանագրի պայմաններով սահմանված ժամկետներում ստանալ Կապալառուի՝ որևէ

լրացուցիչ վճարման պահանջի մտադրության ծանուցումը, ընդունի պահանջի կարգավորման համար սահմանված գործընթացը և ծանուցի Պատվիրատուին դրա մասին.

- Կապալառուի խնդրանքով քննարկել ուշացումը, դրա պատճառները, որոշել և ծանուցել Կապալառուին ժամկետի ցանկացած երկարացման, ինչպես նաև հենանիշի, վճարման, նախագծի ներկայացման ժամանակացույցի ցանկացած փոփոխության մասին: Եթե ուշացումը տեղի է ունեցել պայմանագրերում վկայակոչվող որևէ պատճառով, կամ եթե որոշվել է երկարացնել ժամկետը, խորհրդակցել Կապալառուի հետ Պատվիրատուի անունից և ուղարկել Պատվիրատուի դիտարկմանը ծրագրի, հենանիշի, վճարման և նախագծի ներկայացման ժամանակացույցերի փոփոխությունները, որոնք Կապալառուն համարում է անհրաժեշտ նման ուշացման կամ ժամկետի երկարացման հետևանքով:
- աշխատել Պատվիրատուի և Կապալառուի հետ վեճերի կարգավորման խորհուրդ ստեղծելու համար՝ ինչպես պահանջվում է FIDIC-ի պայմանագրի պայմաններով, և հետևել կապալառուների կամ Պատվիրատուների պահանջների քննարկման բոլոր պահանջվող գործընթացներին.
- անհրաժեշտության դեպքում պատրաստել գործ ուշացման տույժի հայտի կամ կատարողական երաշխիքի պահանջի համար, եթե Կապալառուն չի կատարել իր պարտականությունները:

Ի լրումն վերոնշյալի, Կապալառուից պահանջի ծանուցում ստանալու դեպքում, Խորհրդատուն անմիջապես պետք է ծանուցի դրա մասին Պատվիրատուին և վերջինիս կուղարկի ծանուցման պատճենը:

Կապալառուի ցանկացած պահանջ ստանալուց անմիջապես հետո Խորհրդատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի իր նախնական եզրակացության գնահատականը պահանջի հնարավոր ելքի մասին: Խորհրդատուն պետք է պահանջի Կապալառուից Պատվիրատուին ուղարկել Կապալառուի պահանջի հետ առնչվող բոլոր հաշիվների պատճենները, որոնք վերջինս ուղարկել էր Խորհրդատուին: Մինչև Կապալառուի պահանջի դիմաց Պատվիրատուին որևէ վճարի վավերացումը Խորհրդատուն պետք է քննարկի Պատվիրատուի հետ, թե ինչ հիմքերով է նա մտադիր վավերացնել վճարումը: Խորհրդատուն պետք է ներկայացնի Պատվիրատուին բոլոր մանրամասները, որոնք հնարավորություն կտան Պատվիրատուին կազմել իր կարծիքը Ինժեների վկայագրի մասին:

բ) <u>Ավարտ և թերությունների ծանուցման ժամկետ</u>

Խորհրդատուն պարտավոր է.

- FIDIC-ի պայմանագրի պայմաններով սահմանված ժամկետներում և պայմաններով ստանալ Կապալառուից Աշխատանքների ընդունման վկայագրի թողարկման խնդրանք.
- այդ խնդրանքը ստանալուց հետո 21 օրվա ընթացքում զննել Աշխատանքները Պատվիրատուի ներկայացուցչի հետ.
- պայմանով, որ Պատվիրատուն հաստատում է, որ չի առարկում Ինժեների կողմից վկայագրի թողարկմանը, անմիջապես Կապալառուի համար թողարկել ընդունման վկայագիր, և պատճենն ուղարկել նշված կողմերին՝ նշելով Պայմանագրի համաձայն Աշխատանքների ըստ էության ավարտման ամսաթիվը.
- հաշվի առնելով նշված կողմերի բոլոր մեկնաբանությունները, գրավոր հրահանգ տալ Կապալառուին կատարել բոլոր նշված աշխատանքները մինչև ընդունման վկայագրի թողարկումը: Ծանուցել Կապալառուին Աշխատանքների ավարտի վրա ազդող ցանկացած թերության մասին, որը կարող է ի հայտ գալ այդ հրահանգը տալուց հետո՝ մինչև դրանցում նշված Աշխատանքների ավարտը, պայմանով, որ Կապալառուն ավարտել է նշված աշխատանքները և վերացրել բոլոր ծանուցած թերությունները Ինժեների և Պատվիրատուի համար գոհացուցիչ կերպով: Թողարկել ընդունման վկայագիրը FIDIC-ի պայմաններում սահմանված ժամկետում:
- հրահանգել Կապալառուին ի հայտ բերել թերությունները և դրանց պատճառները, կատարել փոփոխության, վերակառուցման բոլոր աշխատանքները, վերացնել թերությունները, նստեցման դեֆորմացիաները կամ այլ սխալները թերությունների ծանուցման ժամանակաշրջանում՝ FIDIC-ի պայմաններում սահմանված ժամկետում.

- իրականացնել կապալառուների կողմից իրենց պարտականությունների կատարման ընդհանուր մոնիթորինգ թերությունների ծանուցման ժամանակաշրջանում: Պատրաստել և թողարկել կատաման վկայագիր՝ FIDIC-ի պայմաններում սահմանված ընթացակարգերի և ժամկետների համաձայն:
- եթե Կապալառուն հրաժարվի իրականացնել որևէ վերանորոգման աշխատանք, անհրաժեշտության դեպքում աջակցել Պատվիրատուին այլընտրանքային կապալառու վարձելու և Կապալառուից այդ կապալառուին վարձելու ծախսերի փոխհատուցման հարցում.
- խորհրդատվություն տրամադրել Պատվիրատուին ցանկացած ավարտված հատվածի արժեքի, ինչպես նաև ցանկացած լրացուցիչ տեղեկատվության մասին, որը կարող է անհրաժեշտ լինել կատարողական երաշխիքի, ցանկացած այլ պարտատոմսի կամ արժեթղթի գումարի որևէ փոփոխության հաշվարկի համար, որը ձեռք է բերել Պատվիրատուն իր պարտավորությունների երաշխիքի դիմաց.
- կազմակերպել Կապալառուի կողմից տրամադրած ցանկացած չմարած երաշխիքի, օրինակ, կատարողական երաշխիքների, վերադարձը:

գ) <u>Փոփոխություններ</u>

Խորհրդատուն պետք է հաշվի առնի, որ պայմանագրի դրույթների և պայմանների ցանկացած փոփոխություն պետք է իրականացվի միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհամարվի Պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի այնպիսի փոփոխությունները, որոնք բերում են ծառայությունների ծավալի փոփոխության, թույլատրվում են միայն հաստատված նախագծի փոփոխության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրված՝ պայմանագրի գնի փոփոխության շրջանակներում:

Պայմանագրի փոփոխությունները և (կամ) լրացումներն արվում են Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով:

Խորհրդատուն պետք է նաև աջակցի Պատվիրատուին ՎՀԵԲ-ի հետ համաձայնեցրած ընթացակարգերի պահպանման հարցում:

Եթե Խորհրդատուի կարծիքով տեղի չեն ունեցել արտակարգ դեպքեր, որոնք ազդում են կյանքի անվտանգության, Աշխատանքների կամ կից գույքի վրա, Խորհրդատուն Պատվիրատուին կներկայացնի նախնական հաշվետվություն ցանկացած հնարավոր փոփոխության մասին՝ շարադրելով խորհրդատուի կողմից փոփոխության արժեքի գնահատման հիմքերը, որը կներառի հետևյալ ոչ սպառիչ հարցերը.

- Խորհրդատուի կարծիքն առ այն, թե որքանով են Պայմանագրում սահմանված դրույքները և գները՝ եթե այդպիսիք կան, կիրառելի փոփոխված աշխատանքների նկատմամբ: Կարծիքը կազմելիս Խորհրդատուն պետք է հաշվի առնի փոփոխված աշխատանքի համար ներդրվող ծախսերի փաստացի և ակնկալվող արժույթները (և դրանց համամասնությունները)՝ անկախ Պայմանագրով սահմանված տարբեր արժույթների համամասնություններից:
- փոփոխված Աշխատանքների ծավալը և արժեքը կարող է որոշվել՝ օգտագործելով Պայմանագրով սահմանված դրույքները և գները.
- ծավալը և Խորհրդատուի՝ փոփոխված Աշխատանքների գնահատականը, որը կարող է որոշվել՝ օգտագործելով պայմանագրում սահմանված դրույքները և գները որպես գնահատման հիմք: Խորհրդատուն պետք է ներկայացնի պայմանագրում սահմանված դրույքների և գների մանրամասն բացվածքն ու նշի ցանկացած գնային բաղադրիչ, որը Խորհրդատուն օգտագործում է, կամ մտադիր է օգտագործել փոփոխված աշխատանքների արժեքը որոշելու համար:
- փոփոխված Աշխատանքների ծավալը և Խորհրդատուի կողմից դրանց գնահատված արժեքը, որը կարող է որոշվել՝ օգտագործելով միայն Խորհրդատուի և կապալառուների միջև համաձայնեցված դրույքները և գները: Խորհրդատուն պետք է տրամադրի համաձայնության համապատասխան հիմնավորման հիմքերը:

Փոփոխության դեպքում Խորհրդատուն պետք է հետևի FIDIC-ի պայմաններում սահմանված

ընթացակարգերին և պայմաններին.

- Սակայն, եթե Պատվիրատուն պատվիրի հաստատված նախագծի փոփոխություն, և այդ պատվերի կատարումը՝ Ինժեների կարծիքով, էապես ուշացնում է կամ կարող է ուշացնել Աշխատանքների կամ որևէ հատվածի ավարտման ամսաթիվը, պետք է որոշվի ժամկետի երկարացումը և լրացուցիչ գումարը, որի իրավունքը կունենա Կապալառուն Պայմանագրի դրույթների համաձայն:

r) Կասեցում

Պայմանագրով նախատեսված ծառայությունների տրամադրումը կախված է այդ նպատակի համար եղած ֆինանսական միջոցների հասանելիությունից, ինչպես նաև այդ հիմքերով կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքումից: Պայմանագիրը դադարեցվում է, եթե դրա կնքումից հետո վեց ամսվա ընթացքում չեն տրամադրվում ֆինանսական միջոցներ պայմանագրի կատարման համար: Եթե պայմանագրի իրականացման համար հատկացված միջոցների գումարը տասն անգամ գերազանցում է գնման բազային միավորը, Պատվիրատուի կողմից կնքվում է համաձայնագիր Խորհրդատուի կողմից ներկայացված որակավորումների և պայմանագրի երաշխիքի փոխարինման դեպքում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 4-ի N 526-N որոշման 1 հավելվածի 32 կետի 17 ենթակետի «բ» մասը: Բացի այդ, Խորհրդատուն կնքում է համաձայնագիր, և՝ Խորհրդատուի կողմից ներկայացված որակավորումների և պայմանագրի երաշխիքի փոխարինման դեպքում, ներկայացնում Պատվիրատուին նոր երաշխիք՝ համաձայնագրի կնքման մասին ծանուցումը ստանալու ամսաթվից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Այլապես Պայմանագիրը միակողմանի լուծվում է Պատվիրատուի կողմից:

s) Պարտավորությունների չկատարում և վեճեր

Խորհրդատուն պարտավոր է.

- անհապաղ ծանուցել Պատվիրատուին, եթե Կապալառուն չի կատարում իր պայմանագրային պարտականությունները, քննարկել Պատվիրատուի հետ հնարավոր մեղմացնող միջոցները և խորհրդատվություն տրամադրել Պայմանագրի շրջանակներում կողմերի իրավունքների և պարտականությունների մասին:
- Պայմանագրի համաձայն ցանկացած մեկնարկից և Պատվիրատուի կողմից դադարեցումից հետո գործնականորեն հնարավորինս արագ, ընդունել FIDIC-ի պայմաններով սահմանված ընթացակարգերը և պայմանները.
- որևէ հրատապ վերականգնողական աշխատանքների անհրաժեշտության դեպքում գործել Պայմանագրի համաձայն, հակառակ դեպքում, խորհուրդ տալ Պատվիրատուին, որ դա անի Կապալառուն, կամ, եթե դա անհնարին է, քննարկել չկատարումը Պատվիրատուի հետ.
- Պայմանագրից բխող վեճերը պետք է կարգավորվեն բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը պետք է լուծվի Հայաստանի Հանրապետության դատարաններում:
- դադարեցման դեպքում խորհրդատվություն տրամադրել և աջակցել շինհրապարակից Կապալառուի հեռանալու, ինչպես նաև ապրանքների, նյութերի, ծառայությունների մատակարարման և (կամ) որևէ աշխատանքի կատարման որևէ համաձայնագրի արտոնություն տալու հարցում.
- ցանկացած անհաղթահարելի ուժի երևան գալու դեպքում Պատվիրատուին խորհրդատվություն տրամադրել:

*** Ծրագրի մեկնարկի մասին կտեղեկացվի գրավոր**

Ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները

«Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացում» լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտների

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները)՝ ենթաոլորտը(ները)..
1	2
1	Հիդրոտեխնիկական
	Տրանսպորտային
	Բնակելի, հասարակական և արտադրական
	Էներգետիկ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 900018007725
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Տրանսնախագիծ ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0014,
Դավիթ Անհաղթ 23
ՀՎՀՀ՝ 00802905
ՀՀ՝ 1150000461811810
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Մարտիրոսյան

/ստորագրություն/

ԷյՋիԹի Փրոջեքթ ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան,
Շինարարների փողոց, 70 տուն
ՀՎՀՀ՝ 03024399
ՀՀ՝ 11815011091400
Բանկ՝ Այ Դի Բանկ ՓԲԸ
Տնօրեն
Գ. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«23» օգոստոսի 2020թ. կնքված
ՀՏՀՀ-ՏՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							2021-2022թթ ըստ ամիսների, այդ թվում	Ընդամենը
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	Հունվար-մարտ	
1	71351540	տեխնիկական հսկողության ծառայություններ	...	42,000,000	42,000,000	42,000,000	60,000,000	60,000,000	60,000,000	60,000,000	60,000,000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018007725
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Տրանսնախագիծ ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0014,
Դավիթ Անհաղթ 23
ՀՎՀՀ՝ 00802905
Հ/Հ՝ 1150000461811810
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Մարտիրոսյան

/ստորագրություն/

ԷյՋիԹի Փրոջեքթ ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան,
Շինարարների փողոց, 70 տուն
ՀՎՀՀ՝ 03024399
Հ/Հ՝ 11815011091400
Բանկ՝ Այ Դի Բանկ ՓԲԸ
Տնօրեն
Գ. Գրիգորյան

/ստորագրություն/

Հավելված 3
«23» օգոստոսի 2020թ. կնքված
ՀՏՀՀ-ՏՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» օգոստոսի 2020թ. կնքված
ՀՏՀՀ-ՏՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4
«23» օգոստոսի 2020թ. կնքված
ՀՏՀՀ-ՏՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

Աշխատանքներին ներգրավված մասնագետների ցանկ

Չափաբաժին N 1

Հ/հ	**Հիմնական** աշխատակազմում ներառված մասնագետների	
	անունը, ազգանունը	պաշտոնը
1	2	3
1.	Աշոտ Կարախանյան	ճարտարագետ-կոնստրուկտոր
2.	Ալիսա Սավադյան	բնապահպանական և սոցիալական մասնագետ
3.	Վանիկ Խաչատրյան	աշխատանքի անվտանգության մասնագետ
4.	Մարզպետունի Գյոզալյան	ճարտարագետ-երկրաբան
5.	Վալերիկ Ղազարյան	ջրամատակարարման և կոյուղու մասնագետ
6.	Սարգիս Գավալյան	էլեկտրամատակարարման մասնագետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018007725
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Տրանսնախագիծ ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0014,
Դավիթ Անհաղթ 23
ՀՎՀՀ՝ 00802905
Հ/Հ՝ 1150000461811810
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Մարտիրոսյան

/ստորագրություն/
Էյջիրթի Փրոջեքթ ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան,
Շինարարների փողոց, 70 տուն
ՀՎՀՀ՝ 03024399
Հ/Հ՝ 11815011091400
Բանկ՝ Այ Դի Բանկ ՓԲԸ
Տնօրեն
Գ. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ